ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 9 *Общественные науки*

Գ. Սեւիրանյան

ԱՌԱՔԵԼ ԱՐԱՐԱՏՅԱՆԻ ԵՐԿՈՒ ՁԵՌԱԳԻՐ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գրական Բանդարանը վերջերս երևանաբնակ ընկեր Հովհաննես Քանանյանի միջոցով ձեռք է բերել Խաչատուր Աբովյանի դասընկեր Առաքել Արարատյանի երկու ստվար տետրակները, որոնք պարունակում են հեղինակի բազմաթիվ ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունները, ինչպես նաև իր ժամանակակիցներից մի քանիսից բանաստեղծություններ, արձակ էջեր, նամակներ, ճառեր, ուղերձներ և այլն, մեծ մասամբ անտիպ ու մինչև այժմ անհայտ մեր բանասիրության համար։[1]

Գրական այս հարուստ ժառանգությունը մեծապես կարող է օգտակար լինել Աբովյանի կյանքն ու ստեղծագործությունը հանգամանորեն ուսումնասիրողներին և հարուստ նյութ տալ՝ Աբովյանի ապրած ժամանակաշրջանի մասին։

Մեր կարծիքով դժվար է մեծ լուսավորչի պայծառ կերպարը հարազատորեն գծել, առանց նրա ժամանակակիցների, հատկապես նրա դասընկերների գրական արտադրանքը բարեխղճորեն ուսումնասիրելու։ Աբովյանը ծնունդն է հասարակական-քաղաքական մի միջավայրի, որտեղ զարգացել ու գործել են բազմաթիվ ուրիշ մարդիկ, որոնք իրենց լուման են մտցրել թե հայ նոր գրականության և թե աշխարհաբար լեզվի սկզբնավորման գործում և որոնցից մի քանիսը իրենց աշխարհայացքի սահմանափակվածությամբ և տաղանդի պակասով մնացել են Աբովյանի կանգնած բարձրագագաթ սարի ստորոտներում։

Աբովյանի գրական ու հասարակական այդ միջավայրի ընկերներն են Ստ. Նազարյանցը, Գալուստ Շերմազանյանը, Առաքել Արարատյանը և Մսեր Մսերյանցը։

Դժբախտաբար սրանցից միայն Ստ. Նազարյանցն է, որ թե նախահեղափոխական շրջանում և թե սովետական շրջանում արժանացել է բանասերների և պատմաբանների ուսումնասիրությանը։ Գալուստ Շերմազանյանը, Մսեր Մսերյանցը և Առաքել Արարատյանը գրեթե անծանոթ են մնում մեր օրերում, այնինչ նրանք հայտնի անձնավորություններ են եղել և նրանցից մեկի՝ Գ. Շերմազանյանի անվան հետ է կապվում արևելահայ թատրոնի սկզբնավորումը, իսկ Ա. Արարատյանը, գրական այդ նույն դպրոցի ավելի պահպանողական թևին պատկանող մի անձնավորություն, ներկայանում է մեզ 19-րդ դարի կեսերի ուշագրավ դեմքերից մեկը, որը փորձել է գրել արձակ և չափածո գործեր, մեծ մասամբ գրաբար, նրանցից աշխարհաբար։

---

[1] *Առաքել Արարատյանի տետրակները երկար տարիներ գտնվելիս են եղել Ռիգայում, Արարատյանի ժառանգների մոտ։*

Առաքել Արարատյանի այս երկու տետրակներում եղած նյութերից ուշագրավ են հատկապես հետևյալները.

1. Ա. Արարատյանի երկու ոտանավորները Աբովյանի մասին, երկուսն էլ անտիպ։ 1837 թվականին Մսեր Մսերյանցի գրած մեկ նամակը Խ. Աբովյանին։

2. Մ. Թաղիադյանցին վերաբերող նյութերը, որոնց մեջ կարևոր են նրա մի քանի բանաստեղծությունները։

3. Հ. Ալամդարյանի մի շարք բանաստեղծությունները և նրա մահվան ապթիվ գրված ոտանավորներն ու դամբանականները։

4. Ստ. Նազարյանցին վերաբերող նյութերը, այդ թվում Ա. Արարատյանի ոտանավորները ուղղված Նազարյանին և Նազարյանի աշակերտական տարիների ոտանավորները։

5. Բազմաթիվ նամակներ, գրություններ, որոնց հեղինակներից մի քանիսն անծանոթ են և պատկանում են Ներսիսյան դպրոցի շուրջը համախմբված մտավորական սերնդին (Գ. Շերմազանյան, Գրիգոր Մելիքյան, Հովհաննես Համխարյան և ուրիշներ)։

6. Հայ-ռուս հարաբերություններին վերաբերող մի շարք նյութեր, նամակներ, ճառեր, ուղերձներ և այլն։

7. Իր՝ Ա. Արարատյանի ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունները, մասնավորապես նրա գրաբար և աշխարհաբար առակները, որոնք ամբողջացնում են Արարատյանի հեղինակային դեմքը։

Տետրակներից մեկը, որը կազմված է 1828—29 ուսումնական տարում, ամենայն հավանականությամբ նախատեսված է հրատարակության համար[1] և ունի հետևյալ վերնագիրը—

«Արդասիք Ներսիսեան դպրատան Յերկուս հատորս բաղկացեալ։ Հատոր Ա.։ Յորում ժողովին իբր արմտիք ի շտեմարան դանազան արձակ շարադրութիւնք, ճարտասանական ճառք, բարոգք, հատընտիր օրինակք նամակագրութեանց և այլ ինչ բանք շարադրեալք եռանդնաբորբոք բարենախանձ աշակերտաց Ներսիսեան դպրատան հինգ և չորս դասատնաց, յամսն 1828 և 1829 և յայս արձանագրեալ ըստ կարգի երիցութեան ուսման իւրեանց և իւրաքանչիւրոյն հատուկ ձեռագրօք Հանդերձ ստորագրութեամբ անուանց իւրեանց և մականուանց և նշանակութեամբ թուոց աւուրց ամսոց և ամաց, իսկ ապագայ ամացն ժողովելոյ զարմտիս նոցա թողցուք նմին ապագային, և մեք զներկայէս և զանցելոցն միայն լուսն հարցուք փոյթեռանդնասէր հոգունակութեամբ»։

Այս առաջին տետրակը պարունակում է բազմաթիվ ճառեր, արտասանված դպրոցական հանդեսներում, ժողովներում, դամբանականներ, խոսված նշանավոր հանգուցյալների համար, ոտանավորներ, արձակ գրություններ, նամակներ, և այլն։

Մսեր Մսերյանցի գրություններից ուշագրավ է նրա վերոհիշյալ նամակը

[1] Ներսիսյան դպրոցի աշակերտներ Գալուստ Շերմազանյանի, Ստ. Նազարյանցի, Ա. Արարատյանի, Գրիգոր Մելիքյանի 1828 թվի աշակերտական ստեղծագործությունները լույս են տեսել 1928 թվին «Երբախայրիք» Ներսիսեան դպրոցի» ժողովածուի մեջ, բաղկացած երեու մասից։ Ըստ երևույթին Արարատյանի կազմած այս ժողովածուն լինելու էր նրա շարունակությունը։

հասցեագրված Խ. Աբովյանին 1837 թվականին, Աբովյանի Դորպատից վերադառնալու և նոր աշխատանքի անցնելու առիթով։ Նամակը գրված է Հնչեշտից, Քիշնևի մոտ մի կալվածք, որտեղ ապրում էր Մսերյանցը։

Այս նամակը, որի բնագիրը գտնվում է Հայկական ՍՍՌ Գրական Թանգարանի արխիվում և հրատարակված է Աբովյանի «Դիվանի» Ա. հատորում, մինչև այժմ բանասերների ուշադրությունը չի գրավել, այնինչ պարունակում է ուշագրավ դիտողություններ, հատկապես Աբովյանի շուրջը ստեղծված հալածանքի մասին։

Ամենից առաջ հարց է ծագում. ի՞նչպես է պատահել, որ Աբովյանին հասցեագրված նամակը ընկել է Արարատյանի ձեռքը և արտագրվել նրա տետրակում։ Ինքը՝ Խ. Աբովյա՞նն է արտագրել և նրան տվել, թե՞ մի այլ ճանապարհով է հասել Արարատյանին։ Մյուս կողմից՝ հայտնի է, որ Մսեր Մսերյանցը Աբովյանին գրել է բազմաթիվ նամակներ, թե Աբովյանի Դորպատում գտնվելու տարիներին և թե վերադառնալուց հետո, ինչո՞ւ հատկապես այդ նամակն է ընկել տետրակի մեջ։

Մեզ թվում է, որ ինքը՝ Խ. Աբովյանն է հանձնել Արարատյանին և այդ ընտրությունն էլ կատարել է այն պատճառով, որ հիշյալ նամակում խիստ քննադատության է ենթարկվում Էջմիածնի հայ հոգևորականությունը, որը չկարողանալով գնահատել Աբովյանի մեծությունը, հալածանքի մթնոլորտ է ստեղծել նրա շուրջը և պատճառ դարձել, որ Աբովյանը պաշտոնի անցնի Թիֆլիսում։

«Ո՞ւր ես, խաչատուր իմ,— գրում է Մսերյանցը,— ի Տփխի՞սս։ Բարուք է։ Այլ զարմանք էր աղագաւ չկարկառու քեզ միութարութիւն ստինս հայրենիդ աշխարհ, յոր հայեր քո ամենայն ջանքս։ Ջճանաչէ՞ քեզ։ Քարկոծելի երախտամոռութիւնս։

Այսպիսի ցասումնալից տողերով քննադատելով Աբովյանի հակառակորդներին, Մսերը շարունակում է.

«Ո՞չ, դու ա՛յն ես, որ ի սէր նորուն քուրձ պանդխտութեան զանձամբ արկեր զամս վեց։ Կոխեցեր զառապարս, անցէր ընդ շէնս և ընդ անշէնս։ Իսկ այժմ խնդրես հանգիստ և ո՞չ գտանես։ Այդպէս դառն են հայրենիք ի մոտոյ և դոյն աղէտք են, եղբայր, որք վտարանդեցին զարս իմաստունս, և ածին զհամայնաւեր վաղահաս կործանումն, արքայութեան Հայկազանցս»։

Մսերյանցը իր նամակի շարունակության մեջ խորհուրդ է տալիս Աբովյանին ոչ ոքի վրա հույս չդնել, իր բախտը տնօրինել անձամբ, որովհետև «չև է հասեալ ժամանակ կատարեալ լուսաւորութիւն ազգիս և զիա՞ դ զքանքար իմաստնոյդ ճանաչել կարասցե, որք քան զամենայն ինչ արուեստ մեծ համարին լինել սոսկ վաճառիկ...»։

Բավականաչափ խիստ այս նամակից երևում է, որ Աբովյանի շուրջ ստեղծված հալածանքը մեծ դայրույթ է պատճառել Աբովյանի հետ անկեղծ սիրով կապված բոլոր ընկերներին։

Անհամեմատ ավելի ուշագրավ է Արարատյանի երկրորդ տետրակը, որը ինչպես երևում է բովանդակությունից, արդեն զուտ հեղինակի գրչին պատկանող նյութեր են և ամենայն հավանականությամբ Արարատյանը մտադիր է եղել հրատարակել, որպես իր երկերի ժողովածուն։

Այս նոր տետրակը սկսված է 1855 թվին, բայց ավարտված է 1870 թ. և ունի հետևյալ տիտղոսաթերթը.

Զափարանական և արձակ բերթվածք Առաքել վարժապետի Արարատեանց։ Ժամանակս ժամանակս անդստին յաշակերտութիւնս իրմէ և այժմ աստ ի մի վայր իմբագրեալ ի պէտս բանասիրաց իւրովք իսկ ձեռամբ յամի 1855 $\frac{1}{14}$ ՌՅԴ Ի Տփխիս»։

Տետրակում զետեղված են Արարատյանի պատանեկական հասակից գրած ոտանավորները, ճառերը, բարոյախոսական, խրատական գրությունները, որոնց մեջ ուշագրավ են հատկապես «Ի դարձ Ներսիսի վիճակաւոր արքեպիսկոպոսի ի պատերազմին ռուսաց ընդ պարսից, ի Տփխիս ի 1 յունիսի 1828 ամի», «Ի դարձ Ներսիսի ի Ռուսիոյ, ի հայրապետութեան ամենայն հայոց ի Տփխիս, ի 17 դեկտեմբերի 1845 ամի ի բերանոյ հայազուն աշակերտաց գիմնազիայի յետ վեց աւուրց», «Ճառ առաջին ընդ մուտ Յովհաննու արքեպիսկոպոսի Կարբեցւոյ ի Տիխիս յառաջնորդութեան հայոց Վրաստանի ի բերանոյ համրակաց Ներսիսեան դպրատան, ի 4 նոյեմբերի 1830 ամի», ինչպես նաև ոտանավորների այն շարքը, որ վերնագրված է «Ակատութիւն աթոռամոյն էջմիածնի յիշխանութենէ պարսից և անկանիլ նորա ի ձեռս ամենօրհնեալ տերութեան ռուսաց ի ձեռն Պասկևիչ զորագլխին ի մին հոկտեմ. 1827 ամի»։

Սրանց մեջ ամենից առաջ երևում է այն ջերմ վերաբերմունքը, որ ունի Առաքել Արարատյանը ռուսական զրավումների նկատմամբ և հատկապես ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության մասին, վերաբերմունք, որ իր փայլուն արտահայտությունն է գտել Խաչատուր Աբովյանի անմահ «Վերք Հայաստանի» վեպում և այլ ստեղծագործություններում։

Առաքել Արարատյանի ինքնուրույն և թարգմանական այս տետրակում, որտեղ մեծ տեղ են բռնում կրոնական, միստիկական նյութերը, նրա բարոյախոսական ոտանավորները ապերախտության, արիության, սիրո, հեզության, բարեկամության, աշխարհի ունայնության և այլ հարցերի մասին, ուշագրավ են հատկապես հեղինակի բաղմաթիվ ինքնուրույն և թարգմանական առակները։

Այս առակներով Արարատյանը ներկայանում է մեզ իբրև շնորհալի առակագիր, թե որպես ինքնուրույն ստեղծագործող և թե մանավանդ որպես առակագիր թարգմանիչ, ըստ որում առավելապես իբրև Կռիլովի առակների թարգմանիչ։ Ասպիսով Արարատյանն իր տեղն է նվաճում մի կողմից հայ առակագրության մեջ, մյուս կողմից հայ-ռուսական գրական կուլտուրական կապերի զարգացման մեջ։

Առաքել Արարատյանի տետրակներում եղած նյութերի մանրամասն ուսումնասիրությունը թողնելով այլ առիթի, ծանոթանանք Աբովյանին նվիրված նրա երկու ոտանավորներին[1]։

[1] Արարատյանը, թե ուսման շրջանում և թե հետագայում, մոտիկից կամ նամակագրությամբ կապ է ունեցել Աբովյանի հետ։ Թ. Աբովյանին հասցեագրված նամակներից 20-ը այժմ պահվում են Հայկական ՍՍՌ Գրական Թանգարանում։ Դրանցից երկուսը զետեղված է Աբովյանի «Երկեր» Ա. հատորում, իսկ մյուսները տպագրված են Բ. հատորում։

Թե Առաքել Արարատյանի հիշյալ նամակներից և թե մանավանդ նորահայտ երկու

Ոտանավորներից մեկը գրված է Արովյանի ամուսնության առթիվ և ունի հետևյալ վերնագիրը՝ «Առ նորապսակ Խաչատուր Ապովեան ի 14 սեպտեմբերի 1839 ամի. ի Տփխիս», երկրորդը գրված է Արովյանի անհայտացումից մի քանի տարի հետո։

Ամուսնության առթիվ գրված ոտանավորը ամենից առաջ մի շերմ գովք է Արովյանի մասին, այստեղ բացահայտվում է Արարատյանի անկեղծ հիացմունքը դեպի դասընկերը։

«Իմ բարեկամ, իմ հոգեկից,
Երեկ, այսօր մինչ ցօր ելից»։

Այսպես է սկսում ոտանավորը և ապա ամուսնության առթիվ բարեմաղթություններ կատարում։

Ուշագրավ է Առաքել Արարատյանի մի շարք խորհուրդները և բարեմաղթությունները Արովյանի ու Էմիլիայի ապագա կյանքի մասին։ Նա հարևանցիորեն խոսելով «կենցաղական», ընտանեկան հոգսերի, անհամաձայնությունների, անախորժությունների մասին, իր գովաբանած զույգին ընծայում է «վահան համբերության», «դրոշակ արիության» արտահայտությունները, կարծեք որոշ երկյուղ է կրում նրանց ապագայի նկատմամբ։

Այս տեսակետից կարևոր են հատկապես ոտանավորի վերջին հետևյալ տողերը.

«Յայս նորահրաշ զձեզ տեսանեմ տեսարանի
Զիմ Խաչատուր, զԷմիլիա քաջ գեղանի
Մաղթեմ հոգւով բոլորասիրտ բարեկամի
Անպարտ կալ ձեզ յաներեւոյթս պատերազմի։
Քո՛ էր իմ սիրտ, ձեր եղիցի յայսմ հետե
Մի՛ հրաժարիք յայսմ խոնարհ պատարագե.
Ցորշափ կամ ես, յաւանդ էր իմ առ ձեզ կայցէ,
Այսմ ո՛չ մարդ, այլ հրեշտակ վկայեսցէ»։[1]

Արարատյանի ակնարկած «աներևույթ պատերազմին» փաստը արդյոք որևէ ակնարկությո՞ւն է Արովյանի շուրջ ստեղծված ծանր մթնոլորտի մասին. թե սոսկ մի սովորական բարեմաղթության ձև է. դժվար է ասել. Արարատյանը, որը և Արովյանի նշանախոսության վկաներից մեկն է եղել, իր ոտանավորի վերջին տողերով ուխտել է մինչև կյանքի վերջը մնալ հավատարիմ նրան ու պաշտպանել նրան ամեն ինչից։

ոտանավորներից պարզ երևում է, թե ինչպիսի ջերմ սեր է ունեցել Առաքել Արարատյանը Խաչատուր Արովյանի նկատմամբ։ Այն կարծիքը, թե Արարատյանի—Արովյանի փոխհարաբերությունները քառառնական թվականներին լավ չեն եղել և Արարատյանը պատճառ է դարձել «նախաշավիղի» խափանմանը, հիմնականում ճիշտ լինելով հանդերձ, կարիք ունի որոշ վերանայման։

[1] Նկատի ունենալով, որ Արարատյանի հիշյալ երկու ոտանավորները տեղ չեն գտել Խ. Արովյանի «Դիվանի» ոչ Ա. և ոչ էլ Բ հատորներում, մենք գրանք ներկայացնում ենք ընթերցողին այս հոդվածի վերջում։

Անհամեմատ ավելի հետաքրքրական է և կարևոր Արովյանին նվիրված երկրորդ ոտանավորը, որը վերնագրված է «Խաչատուր Ավետիքեան Ապովեանց»։

Հիշյալ ոտանավորը չափածո ձևով նկարագրում է Արովյանի կենսագրությունը ու ջերմ կերպով գնահատում է նրա արժանիքը և մատուցած ծառայությունները հայ ժողովրդին և հայ գրականությանը և մի քանի նոր լուսաբանություններ է տալիս Արովյանի կյանքի և գործունեության հետ կապված, լուսաբանություններ, որոնք մինչև այժմ անհայտ են եղել։

Հիշյալ ոտանավորում մեր ուշադրությունը գրավեցին հատկապես հետևյալ կետերը.

1. Վերնագրված է Խաչատուր Ավետիքյան Արովյանց։ Արդյոք այս փաստը մի նոր հիմնավորում չէ՞ այն վերսիայի, որ Արովյանի հոր անունը եղել է Ավետիք և ոչ Հարություն։ Ինչպես հայտնի է, արովյանագիտության մեջ երկար ժամանակ վեճ է եղել Արովյանի հոր անվան շուրջը, հենց Աբովյանի ձեռագիր վկայություններով իրենց թեզը փորձել են հաստատել թե Ավետիքի և թե Հարությունի կողմնակիցները։ Բազմավաստակ գիտնական Երվանդ Շահազիզը՝ հենվելով մի շարք տվյալների վրա, այդ թվում և Աբովյանի ժառանգներից Լևոն Արովյանի գրավոր հաղորդման վրա՝ պնդել է, թե Ավետիքը եղել է Արովյանի հորեղբայրը, իսկ Հարությունը՝ հայրը։

Խաչատուր Արովյանի «Դիվանում» հրատարակված է Արովյանի ծնողների այն նամակը Արովյանին, որի տակ շատ որոշակիորեն ստորագրված է հորեղբայր Ռ՝ Հարություն ու հայր՝ Ավետիս Արովյանց»։ Անհավանական չէ անշուշտ, որ նկատի ունենալով իր հորեղբոր խանդպատական և գուրգուրալի վերաբերմունքը, Արովյանը նրան կոչեր հայր, սակայն միանգամայն անիմաստ կդառնա, երբ նամակի տակ հորեղբայրը իրեն դարձնի Հարություն և հայրը Ավետիս։ Մեկ թվում է Արովյանի դասընկեր Արարատյանի հիշյալ ոտանավորի վերնագիրը ևս խոսում է հօդուտ Ավետիքի։

2. Ոտանավորը տալիս է կենսագրական ուշագրավ մի փաստ ևս, որը մինչև այժմ հայտնի չի եղել և չի հիշվել նրա մասին գրված կենսագրական աշխատություններում։ Արարատյանի ոտանավորից տեղեկանում ենք, որ Արովյանը Թիֆլիսի «Նունյաց» դպրոցում ուսուցչական աշխատանքի է հրավիրված եղել փոխարքա Վորոնցովի կնոջ միջնորդությամբ։

Դարձյալ այդ ոտանավորից երևում է, որ այդ հրավերը կատարվել է Արովյանի անհայտացումից մի քանի ամիս առաջ, այսինքն այն օրերին, երբ արդեն որոշված էր Արովյանի դավառական դպրոցից արձակվելը։ Թիֆլիսի Նունյաց իգական դպրոցը հիմնված է 1846 թվականին։ Այնտեղ սովորում էին վրացի, հայ, ռուս, ադրբեջանցի և այլ ազգության աղջիկներ։

Աբովյանի կենսագրությունից հայտնի է, որ նրա բազմաթիվ դիմումները Երևանի դավառական դպրոցից ազատ արձակվելու մասին ունեին հիմնականում երկու պատճառ։ Նախ էջմիածնում և Երևանում նրա շուրջ ստեղծված անտանելի մթնոլորտը, որ նրան մղում էր հուսահատության և մյուս կողմից, նրա կնոջ՝ Էմիլիայի ցանկությունը ապրել Թիֆլիսում։ Մյուս կողմից այդ թվերին Երևանում Արովյանի համար դժվար էր մի այլ պաշտոն որոնել։ Պարզվում է, որ Թիֆլիսի Նունյաց դպրոցի ծրագրով և նույն նպատակներով

դպրոցներ են բացվել նաև Բութայիսում, Շամախում և Երևանում։ Երևանի դպրոցը, որ կոչվել է «Հռիփսիմյանց իգական վարժարան», բացվել է արդեն Աբովյանի անհայտացումից երկու տարի հետո՝ 1850 թվականին և հասկանալի է, որ Աբովյանը չէր կարող այնտեղ պաշտոնավորել[1]։

Աբովյանը իր կենդանության օրերին որևէ դեր կատարո՞ւմ է Հռիփսիմյանց դպրոցի բացման ուղղությամբ։ Դժբախտաբար ոչ մի վկայություն չկա, սակայն անհավանական չէ, որ նա այդ ուղղությամբ աշխատած լինի և գուցե նրա դիմումներով է, որ Թիֆլիսի փոխարքան համաձայնություն է տվել Երևանում ևս իգական դպրոց բաց անելու։

Այս ոտանավորում Աբովյանը,— որը Արարատյանին ներկայանում է որպես նրա «հոգևոր համշիրակների» մեջ ամենից աչքի ընկնողը,— գծագրված է այսպես՝

«Քանքարաճոխ, ուշիմապանծ
Շողափայլեր ըստ անգին ականց»։

Աբովյանի կենդանության ժամանակ նրա շուրջ քար լռություն են պահպանել և հալածանք են սկսել նրա հակառակորդները ու այդ էլ հենց վկայում է Աբովյանի մեծությունը։ Իսկ առաջավոր ինտելիգենցիան, նրա ընկերները դեռևս այդ տարիներին տեսել են Աբովյանի մեջ մեծ լուսավորչի, բազմակողմանիորեն զարգացած մի պայծառ դեմքի, որը արդեն գծագրել էր իր տեղը և հայ հասարակական կյանքում և հայ մտքի զարգացման պատմության մեջ։

Արարատյանը, որ այդ ոտանավորում ասում է թե մագնիսական զորությամբ ձգված է եղել դեպի Աբովյանը և միշտ հարդել է նրան, ամենաջերմ ու անկեղծ տողերով նկարագրելով Աբովյանի կյանքի հիմնական ուղենշային դեպքերը, Պարրոտի հետ նրա Մասիս սարը բարձրանալը, Դորպատ գնալը, Թիֆլիս վերադառնալը և մանկավարժական աշխատանք կատարելը և այլն, խոսում է նաև Աբովյանի ոչ միայն մանկավարժական, այլև գրական արժանիքների մասին։

Արարատյանը մեծ գնահատական է տվել նաև նրա գավառական դպրոցի տեսչի պաշտոնին։

«Եղև տեսուչ քաջ և արի
Նահանգական վարժարանի»։

---

[1] Զարմանալի էերպով Երևանի կրթական կյանքով զբաղվողներից և ու մեկը մինչև այժմ չի խոսել Հռիփսիմյանց իգական դպրոցի մասին, որը գործել է 1850 թվականից և ավել է մի շարք շրջավարաններ։ «Կավկազսկի կալենդարի» այդ թվերի համարները ցույց են տալիս, որ 1852—53 ուս. տարում այնտեղ սովորել են 28 աղջիկներ, որոնցից 11-ը հայեր, 10-ը ռուսներ և 7-ը աղբրեջանուհիներ։ Բացի «Կավկազսկի կալենդարից» Երևանի Հռիփսիմյանց վարժարանի անվան հիշատակմանը մենք հանդիպեցինք «Արշալույս Արարատյան»-ում, որտեղ տպագրված է Իզմիրի համանուն դպրոցի աշակերտուհիներից մեկի՝ Տիգրանուհի Շահինյանի ուղերձը ուղղված Երևանի Հռիփսիմյանց վարժարանի աշակերտուհիներին։

Այստեղ խոսքը չի վերաբերում անշուշտ միայն դասավանդմանը և աշակերտների ուսուցմանը, այլ նաև այն կուլտուրական, հասարակական աշխատանքին, որ Աբովյանը կատարել է նահանգական դպրոցում։

Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» թերթի մի տեղեկությունից իմանում ենք, որ 1847 թվականին, այսինքն Աբովյանի գործունեության վերջին տարում, Երևանի գավառական դպրոցում բացվել է հատուկ թանգարան, որտեղ կենտրոնացվել են Հայաստանի հանքային հանածոներից նմուշներ և նույնիսկ հնության բեկորներ։ Եվ այդ թանգարանն են բերվել արդեն Տրդատ թագավորի տաճարի սյուների մասերից մեկը։[1]

Այս թանգարանի բացումը, որը ըստ էության Հայաստանի առաջին թանգարանն է հանդիսացել, անվիճելիորեն կապվում է Աբովյանի անվան հետ։ «Կովկասի» տպած ինֆորմացիայի մեջ Աբովյանի անունը չի հիշատակված, սակայն, մեր կարծիքով, գուցե այդ կատարված է ցենզուրական նկատառումներով, որովհետև առհասարակ «Կովկասում» Աբովյանի անունը չի տպագրված, նույնիսկ նրա «Ադելաիդա» թարգմանական պիեսի հրատարակության առնչությամբ։ Ո՞վ կարող էր 1847 թվականին գավառական դպրոցում կատարել այդպիսի մի կուլտուրական խոշոր ձեռնարկում, քան բազմակողմանիորեն զարգացած, հայ ժողովրդի անցյալի պատմությանը հմուտ նրա տեսուչը։

Որ Աբովյանը բացի գրական, մանկավարժական աշխատանքից Երևանում կատարել է հասարակական խոշոր աշխատանք, շփվել է Արարատյան նահանգի բոլոր գավառների հետ և ամեն տեղ օգտակար խորհուրդներ տվել, օգնել կուլտուր լուսավորական գործին, այդ երևում է թե Պողոյանի հուշերից, և թե Առաքել Արարատյանի հետևյալ տողերից.

«Ի Վրաց վազեաց նա Երևան
Հանել և անդ զշնորհս յերևան.
Ուր զամս հինգ զգիւղ, զաւան
Արար ջանիւք իւր գոհ հաւանս։

Նվազ ուշագրավ չեն այն տողերը, որ Արարատյանը նվիրել է Աբովյանի անհայտ բացակայությանը։ Ըստ Արարատյանի՝ մինչդեռ Վորոնցովի կնոջ հրավերից հետո նա պատրաստվում էր մեկնելու Թիֆլիս.

«Ի գիշերի ընդ արշալոյս
Երրորդ աւուր ապրիլ ամսոյս
Յանկարծ կարու իմ Ապովեան
Թափուր թողեալ զիւր ննջարան։

Արարատյանը մեկ առ մեկ թվարկում է այն բոլոր ենթադրությունները, որ եղել է Աբովյանի անհայտացման օրերին։ Ըստ Արարատյանի բոլորի համար անորոշ է մնացել թե արդյոք ձախորդությո՞ւն է, որ նրան «անակնկալ խլեալ բառնա», թե սպանվել է թշնամիների կողմից։

Սրտի մղկտոցով արձանագրելով այս բոլորը, նա զարմանում է, թե միթե աշխարհը այդպես պետք է վարձատրեր այնպիսի մի խոշոր մարդու, ինչ-

[1] Այս մասին տես նաև «Դիվան Խ. Աբովյանի», Ա. հատոր, էջ 182։

պիսին է, որ Խ. Աբովյանը ու մխիթարվում է նրանով, որ անհայտանալով Աբովյանը, չի անհայտացել Աբովյանի գործը և որ նա թողել է իր որոշակի ազդեցությունը։ Եթե անգութ հողմը ցրել տարել է Աբովյանին ու կորցրել, սակայն թողել է այն սերմերը, որ Աբովյանը ցանել է ժամանակի երիտասարդների մտքի մեջ։ Եվ այդ նոր աճող երիտասարդներն էլ իրենց ապագա գործունեությամբ հավերժ կոթող են կանգնելու Խաչատուր Աբովյանի հիշատակին։

Ավելի կարևոր է Արարատյանի պատկերացրած երկրորդ կոթողը, որ արդեն վերաբերում է Աբովյանի գրչի վաստակին.

«Բաց յայսմանէ երկունք գրչին
Մինչ ընդ մամլով խոնարհեսցին,
Անջինջ արձանք նմա լիցին.
Երախտագէտ սիրտս 'ազգին»։

Առաքել Արարատյանի մեր հիշատակած ոտանավորը ըստ էության հայ իրականության մեջ առաջին փաստաթուղթն է, որ կարողացել է գնահատել անմահ Աբովյանի արժանիքները և հշել նրա տեղը հայ գրականության մեջ։ Հենց այս տեսակետից էլ առանձնահատուկ ուշադրության արժանի է այն։

Ստորև բերում ենք Արարատյանի վերոհիշյալ երկու ոտանավորները ամբողջությամբ։

Առ նորապսակ Խաչատուր Ապովեան
ի 14 սեպտեմբերի 1839 ամի, ի Տփխիս

Ո՛մ բարեկամ, իմ հոգեկի՛ց
Երէկ, այսօր, մինչ ցօր ելից։
Թէ յաշխարհի կայցէ վիճակ Աստուածահաճ,
Ամուսնութիւն յայնմ դասիւ է միշտ յառաջ.
Զորոյ արմատ տնկեաց յԵդեմ Տն. իմոյ աջ.
Մշակելով ինքնին արար զնա բարգաւաճ։
Ի գիրկ անմեղ, ի սէր, համբոյր քաղցրիկ ամլոց
Խնդան երկինք, և զօրհնութիւն ցօղեն յամպոց.
Եվ մինչ շրջին լինել զննին բնութեան գեղոց
Սփռէ երկիր զծաղկունս բաղդի զոտիւք նոցունց։
Ընդ այս արծիւ պարէ սրաթև ի վեհ կամար,
Ու տիրաբար յառաջ կարդայ զիւր կամարար.
Թռչուն երգնակք գեղափետուրք փութան ի պար,
Տօնել զպսակ նոր ամուսնոց ջերմ. տիրափար։
Զի քաջամարտք ասպարիսել հանդիսանան.
Ծեպեն ցրել զդիմադրութիւնս կենցաղական.
Ուստի մին տայ նոցա վահան համբերութեան,
Միւսն սուսեր և դրօշակ արիութեան։
Կուռ և վառեալ բոլորովին զէն յարքենի.
Յաջ և յահեակ յաղթեն զմարտս աշխարհի,

Դերապայծառն մրցանակ անդ պատրաստի,
Ուր ամենայն ճիգն և քրտունք նոցա ուղղի։
Յայս նորահրաշ զձեզ տեսանեմ տեսարանի
Զիմ Խաչատուր, Զէմիլիա քաջ գեղանի.
Մաղթեմ հոգսով բոլորասիրտ բարեկամի
Անպարտ կալ ձեզ յանեբևոյթս պատերազմի։
Քո՛ էր իմ սիրտ, ձե՛ր եղիցի յայսմհետէ.
Մի՛ հրաժարիք յայսմ խոնարհ պատարագէ.
Զորչափ կամ ես, յաւանդ սէր իմ առ ձեզ կայցէ.
Այսմ ո՛չ մարդ, այլ հրեշտակ վկայեսցէ։

Բարեկամ ձեր և խոնարհ ծառայ Ա. Արարատեան

Խաչատուր Ավետիսեան Ապովեանց

Հատեալ ի ստեանց ուսման դրաց
Նախածնող հօրս որբոց
Ը Պաւղոսի մտի կըրթոց.
Քերթողութեան դիել զծուծ
Ուր հոգեսուն համշիրակաց
Մի էր Խաչիկն իմ Ապովեանց
Քանքարաճոխ, ուշիմապանծ
Շողափայլէր ըստ անգին ականց։
Երկաթաբար ես ընդ նմա
Սրտէ ի սիրտ մագնիսեցայ.
Թէ դէմ առ դէմ և թէ բացեայ
Յարգել զնա ոչ վերջացայ։
Ել ի Մասիս, և էջ անտի
Ընդ բանիբունն Պարրոտի.
Ուսման ծարաւ ըստ կարոտի
Անց ի Դորբատն Լիֆլեանդի։
Ուստի դարձեալ յաշխարհ Տփխեաց
Յետ քառամեայ պանդխտութեանց
Որպէս մեղու փեթակ ի մտաց
Գանձեալ խորիսխս մեղու ուսմանց.
Եղև յագուրդ սովեալ մանկանց
Ըստ Եվրոպեան գիտնականաց,
Վարդապետեալ յոճ դիւրիմաց,
Բացեալ զոսկի հանքս համբակաց։
Եղև տեսուչ քաջ և արի
Նահանգական վարժարանի.
Ընդ Էմիլիայ օրիորդի
Զուգեալ ծնաւ Վարդան որդի.
Ի Վրաց վազեաց նա յԵրևան,
Հանել և անդ զշնորհսն յերևան.

Ուր զամս հինգ զգիւղ, զաւան
Արար ջանիւք իւր գոհ, հաւան։
Գոգ քան զքառորդ միոյ գարու,—
Ինձ հոգեկից այրն մեծարու.
Թէ ի ժամու, տարաժամու
Եղէ նմա ձեռնկալու։
Ըստ հաճութեան Տիկնոջ մեծի
Փոխարքային Վօրոնցովի
Ի դպրոցի Նոմնեայ կուսի
Նշանակեալ պետ մեկ ուսի։
Մինչ պարարաստեալ ի չու յայսկոյս
Առեալ զտուն, զամենայն գոյս
Ի գիշերի ընդ արշալոյս
Յերրորդ աւուր ապրիլ ամսոյս
Յանկարծ կորեաւ իմ Ապովեան
Թափուր թողեալ զիւր ննջարան (1)
Ի յոյզ մատեաւ քաղաքն համայն
Յիշխանաց իւր առեալ հրաման։
Անմարդայայտ անհետանայ.
Ամենեցուն թագուն մնայ.
Զախորդութիւն թէ ի՞րր զնա
Անակնկալ խլեալ բառնայ։
Աղօտ կարծիք եղև ոմանց,
Թէ սպանաւ նա յայլ ազգեաց.
Խորեալ ի հոր ինչ արմտեաց
Գազանասիրտ յանօրինաց։
Այսպէս աշխարհ վարձատրեաց
Զարժանայարգն Ապովեանց.
Յամենայնէ հանեալ ի բաց
Միսասովոր մեծարանաց։
Քահանայից ի մաղթանաց,
Ի փրկագործ պատարագաց,
Յերգոց նուագաց, ի մաղմոսաց
Սարկաւագաց, կղերց ժամասաց։
Եւ յողջունէ ընդ իւրոցն՝ յետնոյ.
Ր պատանէ, ի բուռն դևտնոյ.
Ըստ չնաշխարհիկ ընտրեալ գիտնոյ
Զառեալ ինչ շուք ի ստորնոյ։
Գուցե սուրբ մայրն էջմիածին
Խնդրեաց վրէժ ուխտաւորին.
Որ վասն ուսման չեկաց ի նմին,
Մտեալ վիճակ յաշխարհային։
Եւ կամ Մասիս ցասեալ պատժեաց,

(1) Այս եղև յամի 1848։

Որ զինքն երկիցս ոտնակոխեաց.
Կամ Քանաքեռ անէծս կարդաց[1]
Լքեալ նորայն ի շնորհաց։
Զայս լսելով մի՛ դիւրակարծ,
Թէ զերբ հողմ զծուխս բաղդ զնա ցնդեաց.
Սեբմրն ուսման, զոր նա ցանեաց
Յանդս մտաց պատանեկաց։
Ի՛ուսեալ, աճեալ պտղաբերեաց,
Ոչ սակաւուց քիմս անուշեաց.
Յաւէժական յիշատակաց
Եղեալ կոթող անմահ փառաց։
Բաց յայսմանէ երկունք գրչին
Մինչ ընդ մամլով խոնարհեսցին,
Անջինջ արձանք նմա լիցին.
Երախտագէտ սիրաս ազգին։
Թո՛ղ սնարանք կարկատեսցեն
Զի՛նչ ե կամին բարբանջեսցեն....
Զի՞ մարգարիտ՝ աքաղալին,
Կուտ նորա է անարգ գարին,
Էշն ի՞նչ գիտե զարմաւոյ գին,
Եւ կամ դատել զձայն սոխակին։
Այսպէս իմա զպարսաւադրաց
Անձնանուէր ազգասիրաց։

[illegible]

[1] Քանաքեռ գիւղ մերձ ի քաղաքն Երեւան՝ հայրենիք է Խաչատուր Ավովեանց։